

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 22/11

ք.Երևան

20 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Անուշ Թադևոսյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Անուշ Թադևոսյանը հայտնում է, որ ս.թ. հունվարի 19-ին ներկայացրել է համապատասխան հաշվետվությունները, որոնց հետ միասին ներկայացրել է նաև շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Սակայն ծրագրային խնդիրների պատճառով նշված հայտարարությունը չի մուտքագրվել: Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը մուտքագրված չլինելու մասին Ա/Ձ Անուշ Թադևոսյանը տեղեկացել է միայն հարկային մարմնի կողմից ուղարկված ծանուցումից հետո:

Ա/Ձ Անուշ Թադևոսյանը խնդրում է հաշվի առնել վերը նշված հանգամանքները, ինչպես նաև այն, որ տարիներ շարունակ համարվել է շրջանառության հարկ վճարող, բարեխղճորեն կատարել է իր հարկային պարտավորությունները և իրեն համարել շրջանառության հարկ վճարող:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Անուշ Թադևոսյանը պետական գրանցում է ստացել 10.01.2008թ. (պետական գրանցման համար՝ 35.01218) և իրականացնում է մանրածախ առևտրի գործունեություն (ոսկերչական արտադրատեսակներ):

Ա/Ձ Անուշ Թադևոսյանը 16.01.2015թ., 08.02.2016թ. և 19.01.2017թ. ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություններ և 2015–2017թթ. ընթացքում հանդիսացել է շրջանառության հարկ վճարող:

Ինչ վերաբերվում է 2018թ.-ին, ապա Ա/Ձ Անուշ Թադևոսյանի կողմից սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն չի ներկայացվել: Արդյունքում, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՀՎ հարկային տեսչություն-վարչության վերլուծության թիվ 2 բաժնի 14.03.2018թ. թիվ 421 գրությունով Ա/Ձ Անուշ Թադևոսյանին ուղարկվել է թիվ 421/2018/ՓԾ ծանուցագիրը, որով առաջարկվել է 2018թ. համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնել ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ:

2018թ. հունվար-մարտ ամիսների համար Ա/Ձ Անուշ Թադևոսյանի կողմից ներկայացրել է ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ, որոնցով հայտարարագրվել է 1.495.810 դրամ իրացման շրջանառություն:

30.03.2018թ. Ա/Ձ Անուշ Թադևոսյանը ներկայացրել է հայտարարություն՝ 01.04.2018թ. գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ:

Ա/Ձ Անուշ Թադևոսյանի կողմից 2017թ. ընթացքում ներկայացված շրջանառության հարկի հաշվարկների համաձայն հայտարարագրված իրացման շրջանառությունը կազմել է 6.048.700 դրամ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նուտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Անուշ Թադևոսյանի կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ սահմանված կարգով հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Միևնույն ժամանակ ներկայացված դիմում-բողոքում չի ներկայացվել հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Անուշ Թադևոսյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



[Handwritten signature] Ա.ՄԻՐՈՒՄՅԱՆ